ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով հարկատուների շրջանում շրջանառվող անհիմն տեղեկությունները համայնքային բյուջեների գույքահարկի և հողի հարկի մասով նախորդ տարիներին գոյացած պարտավորությունները (ապառքներ, տույժեր և տուգանքներ) արտոնելու կամ զիջելու վերաբերյալ՝ տեղեկացվում է, որ ՀՀ կառավարությունը դրանց մասով որևէ զիջում կամ արտոնություն չի սահմանել: Ուստի առաջարկվում է հարկատուներին՝ կատարել իրենց հարկային պարտավորությունները՝ հետագայում գույքահարկի կամ այլ տեսակի պարտքեր չկուտակելու համար: Կոչ ենք անում բոլոր հարկատուներին՝ ուշադրություն չդարձնել անհարկի շրջանառվող ու ոչ արժանահավատ աղբյուրներից ստացվող ապատեղեկատվություններին եւ ժամանակին ու ամբողջությամբ կատարել ձեր հարկային պարտավորությունները:

Գեղարքունիքի մարզպետարան